



ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 30 ՅՈՒՆԻՈՒՆ, 2017

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՐՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, ԿՈՒՐ Ինձ իմաստութիւն Կբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. Ի չար խորհրդոց, Ի բանից եւ Ի գործոց փրկեա Կիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՍԱՂՄՈՍ 121

ԱՍՏՈՒԱԾ ՄԵՐ ՊԱՀԱՊԱՆԸ

Աչքերս դէպի լեռները կը բարձրացնեմ,
ուրկէ օգնութիւն պիտի գայ ինձի:
Օգնութիւնս Տիրոջմէն է որ պիտի գայ,
որ արարիչն է երկինքին ու երկրին:
Անիկա թոյլ պիտի չտայ որ փորձանքի մէջ իյնաս,
որովհետեւ քու անունն Պահապանդ է ան:
Արդարեւ ան չի՛ ննջեր եւ չի՛ քնանար,
իր ժողովուրդին Պահապանն է ան:
Տէրը քու պահապանդ է,
քու հովանի պաշտպանդ է, կողքիդ կանգնած:
Ոչ ցերեկ ատեն արեգակը քեզի վնաս պիտի տայ,
ոչ ալ լուսինը՝ գիշեր ատեն:
Տէրը ինք քեզ պիտի պահէ ամէն չարիքէ,
եւ քեզ պիտի պահպանէ:
Տունէդ դուրս ըլլաս թէ ներս՝
Տէրը ինք քեզ պիտի պաշտպանէ,
այժմէն մինչեւ յաւիտեան:

ՇԱՐԱԿԱՆ-ԱՐՈԹՔ

*Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:
Ամենասուրբ Երրորդութիւն, տուր աշխարհիս խաղաղութիւն:
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցէրոց արքայութիւն:
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղէրոց:
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:*

*Պահապան ամենայնի Քրիստոս,
աջ քո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,
ի նստիլ ի տան, ի գնալ ի նանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:*

ՕՐՈՒՄՆ ՆԻԹԸ

ՅԱԿՈԲՈՍ ՏԵԱՌՆԵՂԲՕՐ
ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ՆԱՄԱԿԸ
1:16-27

ՓՈՐՁՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՄԻՋՈՑ ԿԵԱՆՔԻՆ ՏԻՐԱՆԱԼՈՒ (1:16-18)

Շարունակելով, Յակոբոս Առաքեալ կը յսրակցնէ, թէ փորձութիւնները կու գան չարէն եւ մեր ցանկութիւններէն, որովհետեւ այդ բոլորի պատճառը մեր անկեալ վիճակն է: Ուստի, Առաքեալը կ'ըսէ. «**Դուք ձեզ մի՛ խաբէք**» ըսելով, թէ Աստուած է որ կը փորձէ մեզ: Որովհետեւ «**միայն բարի նուէրները եւ կարարեալ պարգեւներն են որ կու գան երկինքէն, Հօր Աստուծմէ, որ լոյսի արարիչն է, որուն կամքը անփոփոխ է, անդառնալի եւ անսպուեր**» (17 հմբ): Առաջին իսկ արտայայտութեամբ արդէն իսկ Առաքեալը ցոյց կու տայ թէ մեզմէ, մենք որպէս անկեալ, ինկած արարածներ, բարի նուէրներ չեն գար: Ուրեմն կը նշանակէ, եթէ երբեք մեզմէ բարութիւն է որ դուրս կու գայ, ապիկա անպայմանօրէն Աստուծոյ պարգեւն է, որուն պէտք է գիտակ ըլլանք, եւ մանաւանդ՝ զգուշ, որ այդ բոլորը մեզի չվերագրենք: Ինչպէս առիթով մը հարուստ երիտասարդը Յիսուսի գալով պիտի ըսէր. «Բարի Վարդապետ», Յիսուս պիտի պատասխանէր ըսելով. «Ինչո՞ր զիս բարի կ'անուանես, որովհետեւ միայն Աստուած բարի է»: Մանաւանդ՝ երբ բարութեան մասին կը խօսինք, պէտք է որ այդ բարութիւնը համեմատել բացարձակ Բարիին հետ: Բայց մեր անկեալ բնութիւնը չունի այդ կարողութիւնը այդ բարութիւնը տեսնելու, ու մանաւանդ՝ այդ բոլորը ըստ այնմ օգտագործելու: Ինչպէս կը կարդանք Ծննդոց գիրքի սրբեղծագործութեան պատմութիւնը. «Եւ Աստուած տեսաւ որ ամէն ինչ բարի էր»: Կը նշանակէ, թէ Աստուծոյ սրբեղծագործութիւնը, Աստուծոյ տուածին մէջ չարութիւն չկայ, ամէն ինչ բարի է, ու մանաւանդ՝ տրուած է բարիին ու բարութեան համար օգտագործելու: Մանաւանդ՝ Ինք որ լոյսի արարիչն է: Կը նշանակէ Անոր մէջ խաւար չկայ: Առաւել, Անոր կամքը անփոփոխ է, կը նշանակէ Ինք անփոփոխ է, Իր կամքն ալ անփոփոխ, անդառնալի ու անսպուեր: Այս բոլորը կը նշանակեն Աստուծոյ ծրագիրները, մանաւանդ կապուած Անոր տուած խոստումին, ուխտին, մարդու փրկութեան անփոփոխ են: Անոր համար ալ զինք կը ճանչնանք որպէս Հաւաքարիմ, Ճշմարիտ: Տակաւին, Պօղոս Առաքեալ պիտի ըսէ. «Երեկ, այսօր նոյն եւ յաւիտեան» (Եբր 13:8):

Իսկ թէ ի՞նչ են այդ բարի ու կարարեալ նուէրներն ու պարգեւները որ երկինքէն կու գան, փրկութիւնը, որ պարգեւ է, ձրի նուէր տրուած անկեալ մարդուն: Ահա այս իսկ է Աստուծոյ կամքը, մեզ վերստին ծնիլ՝ հոգեւոր ծնունդ, ինչպէս պիտի ըսէ Քրիստոս Նիկողիմոսին (Յովի 3): Այս բոլորը կարարեց Իր իսկ կամեցողութեամբ, որովհետեւ գթած, ողորմած ու Սէր է: Ահա Յակոբոս յսրակցօրէն ցոյց կու տայ, թէ մեր ցանկութիւններէն ուրիշ բան դուրս չի գար եթէ ոչ մեղք ու մահ, իսկ Աստուծմէ՝ փրկութիւն եւ նոր սրբեղծագործութեան առաջին պտուղներ: Ահա Աստուծոյ փրկութեան ծրագիրը ուրիշ բան չէ եթէ ոչ անկեալ մարդուն վերադարձը, ու անոր վերադարձով նոր սրբեղծագործութիւնը: Ինչպէս պիտի ըսէ Պօղոս Առաքեալ. «Ուե՛տ մէկը որ Քրիստոսի միացած է՝ նոր արարած է» (2 Կորնթ 5:17):

ԱՍՏՈՒԾՈՅ ԽՕՍԹԸ ԼՍԵԼ ՈՒ ԿԱՏԱՐԵԼ (1:19-27)

Այնքան հեղափոխական է մեր կազմուածքը, որուն յաճախ չենք անդրադառնար: Ահա այս հարուածը կու գայ մեզի տալու առիթը լաւ դիտելու մարդու կազմուածքը, թէ ինչպէս Աստուած մարդու տուած է երկու ականջ, բաց դրուածքով, իսկ մէկ բերան, որուն մէջ լեզուն, ան ալ փակ վիճակով: Նկարի առած ցանկութիւններն ու փորձութիւնները, ու անոնց դիմաց Աստուծոյ բարութիւնը, ողորմութիւնն ու փրկութեան պարգեւը, Առաքեալը կը թելադրէ, որ հաւաքացեալները աւելի պատրաստակամ ըլլան լսելու, քան՝ խօսելու: Լսելը այս պարագային Աստուծոյ պարգամները լսելու, մանաւանդ երբ, Պօղոս Առաքեալ պիտի ըսէ. «Հաւաքքը կու գայ լսելէն, լսելը Աստուծոյ խօսքին քարոզութենէն» (Հռոմ 10:17): Դիւրաւ մի՛ բորբոքիք, բարկանաք, որովհետեւ բարկանալով չենք կրնար Աստուծոյ արդար ծրագիրը իրականացել, նոյնիսկ եթէ երբեք այդ բարկութիւնը նախանձախնդրութենէն թելադրուած ըլլայ, որովհետեւ Աստուծոյ ծրագրին իրականցումը կախում

ունի Աստուծոյ խօսքին զօրութենէն: Անոր համար ալ Առաքեալը կը զգուշացնէ ըսելով եւ ցոյց տալով Աստուծոյ խօսքին զօրութիւնը, որ հոգիներ կը փրկէ: Աստուծոյ ծրագրին իրականացումն ալ այդ հոգիներուն փրկութիւնն է, եւ այդ փրկութիւնը կու գայ նոյնինքն Աստուծմէ եւ ոչ թէ մարդոցմէ: Եթէ Աստուծոյ խօսքը մեր մէջ սերմանուած է, այդ խօսքը նախ ընդունինք հեգութեամբ, երկրորդ, ընդունինք նաեւ որ այդ խօսքը պարզ սովորական խօսք մը չէ, այլ՝ զօրութիւն ունի իր մէջ որ մեր հոգիները կը փրկէ (21 հմր): Այս ընելու համար պէտք է թօթափել ամէն յոռի սովորութիւն ու չար ցանկութիւն եւ հեգութեամբ ընդունիլ այդ սերմանուած խօսքը:

Երկրորդ, այդ պատուիրանները միայն լսողներ չլլալ: Ճիշդ է երկու ականջ փրուած է, որ խօսելէ աւելի լսողներ ըլլալ, բայց լսելն ալ բաւարար պիտի չլլայ եթէ երբեք այդ լսուածը չենք կատարեր: Հետաքրքրական է, որ անցեալին մարդիկ որոնք ուսուցումներ կը լսէին, երբ կը փորձէին կատարել այդ լսուածը անոնք կը կոչուէին աշակերտներ: Իսկ միւսները՝ լսողներ: Քրիստոս ալ Իր ուսուցումներու աւարտին պիտի ըսէր. «ուրեմն, ով որ իմ այս խօսքերս կը լսէ եւ կը գործադրէ զանոնք, պիտի նմանի այն իմաստուն մարդուն, որ իր փունը ժայռի վրայ կը շինէ: Իսկ ով որ իմ այս խօսքերս կը լսէ բայց չի գործադրէր զանոնք, պիտի նմանի այն յիմար մարդուն, որ իր փունը աւազի վրայ կը շինէ» (Մտք 7:24-27): Սա կը նշանակէ, կրաւորական լսելը բաւարար չէ, այլ՝ կեանքի կոչել լսուածը: Այլ Առաքեալը կ'ըսէ. «դուք ձեզ խաբած կ'ըլլաք» (22 հմր): Այդպիսին կը նմանի անոր՝ որ ուշադրութեամբ ինքզինք հայելիին մէջ կը դիտէ. հազիւ հայելիէն հեռանայ ինքզինք կը սոսնայ թէ ինչպիսին է (23-24 հմր): Նոյնպէս ալ Աստուծոյ խօսքը միայն լսելը կը նշանակէ առիթ կու տայ լսողին ուշադրութեամբ ինքզինքին նայելու, զննելու, քննելու, ոչ միայն արտաքին, այլ նաեւ ներքին, որովհետեւ Աստուծոյ խօսքը *«կենդանի է եւ ազդու, աւելի հասարակ է քան ուրիշ երկասարկի սուր, եւ կը թափանցէ մինչեւ մարդուս շունչին ու հոգիին մէջ, մինչեւ ողն ու ծուծը, եւ կը քննէ մտածումներն ու սրտին խորհուրդները: Եւ չկայ արարած մը որ Աստուծոյ փեստողութենէն վրիպի: Անիկա պարզ ու յստակ կը տեսնէ ամէն ինչ, իրենց ամբողջ մերկութեամբ: Եւ անոր է որ հաշիւ պիտի տանք»* (Եբր 4:12-13): Անոր համար ալ որքան զգուշ պէտք է ըլլալ Աստուծոյ խօսքի քարոզութեան ժամանակ: Որովհետեւ քարոզիչը ուրիշ մէկը չէ եթէ ոչ այդ խօսքը իբրեւ հայելի ներկայացնողը: Ինք հայելին պարտասպողը չէ, ինք պարզապէս այդ հայելին բարձր բռնողն է, որպէսզի մարդիկ անոր մէջ տեսնեն, տեսնելով անդրադառնան, անդրադառնալով դարձին գան, որպէսզի Տէրը փրկէ:

Ուրեմն, ինչպէս կարելի է Աստուծոյ խօսքը ոչ միայն լսել, այլ նաեւ գործադրել: Լեզուն սանձելով, ողորմութիւն ընելով եւ անարար կեանք ապրելով: Այլ խօսքով, հաւաքքը գործքով արտայայտող:

